**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**

**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**N 6/11**

**Քաղ.Երեւան** **25 փետրվարի 2011թ.**

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ՝ Ա.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Բաբայան, Ա. Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2011թ. փետրվարի 25-ի նիստում (արձանագրություն N 2/1) քննարկեց «ԳիգաԲայթ Թեքնոլոջի Քո.» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Զ. Մանուկյանի կողմից 2010թ. դեկտեմբերի 12-ին ներկայացված «GIGABYTE» (հայտի համարը՝ 20091579) բառային ապրանքային նշանի կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք է հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1–ին մասի 4-րդ կետը, համաձայն որի որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը բացառապես բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք համընդհանուր են դարձել խոսակցական կամ առևտրային պրակտիկայում: «GIGABYTE» հայտարկված ապրանքային նշանը չի գրանցվել, քանի որ «GIGABYTE»-ը ինֆորմացիայի չափման միավոր է և տեխնիկայի մեջ օգտագործվում է որպես մասնագիտական տերմին:

Բողոքում ներկայացված է մերժման հիմքը եւ նշված է, որ 2010թ. մայիսի 12-ին Մտավոր սեփականության գործակալության ապրանքային նշանների եւ արդյունաբերական նմուշների բաժնի կողմից մերժվել է ապրանքային նշանի գրանցումը:

Չհամաձայնելով որոշման հետ՝ 2010թ. հուլիսի 13-ին բողոքարկողը խնդրարկել է կրկնական փորձաքննություն, սակայն 2010թ. սեպտեմբերի 17-ին կրկին ստացել է մերժման որոշում:

Ստորև ներկայացնում ենք բողոքարկողի հիմնավորումները:

Բողոքարկողը գտնում է, որ գիգաբայթը իրենից չի ներկայացնում մասնագիտական տերմին, ինչպես նշված է փորձագետի ձևակերպման մեջ: Մասնագիտական տերմինը դա որևէ հասկացություն անվանող բառ է, այնինչ չափման միավորը երբեք հասկացություն անվանող բառ

չէ: «GIGABYTE» բառը մասնագիտական տերմին չէ, այլ հիշողության ծավալի չափման միավոր, այն էլ ոչ թե հիմնական, այլ ածանցյալ: Որպես այդպիսին այն չի մատնանշում որոշակի տեսակի ապրանք կամ մատուցվող ծառայություն: Իսկ եթե հիշողության ծավալը մտնում է համակարգչի հիմնական պարամետրերի մեջ և դրա չափման միավորը հայտնի է համակարգչային տեխնիկա գնող մարդուն, դա դեռ չի նշանակում, որ այն մտել է խոսակցական կամ առևտրային պրակտիկա և դարձել համընդհանուր:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2010թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ արտոնագրային հավատարմատար Զ. Մանուկյանի կողմից ներկայացվել է «GIGABYTE» (հայտի համարը՝ 20091579) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Համառոտ նշվեց մեժման հիմքերը և կոլեգիայի քննարկման արդյունքը այն մասին, որ հայտարկված «GIGABYTE» ապրանքային նշանը իսկապես ինֆորմացիայի չափման միավոր է և տեխնիկայի մեջ օգտագործվում է որպես մասնագիտական տերմին, հետևապես գրանցման ենթակա չէ:

Բողոքարկողը առարկեց՝ նշելով բողոքում ամրագրված հիմնավորումները:

Հունվարի 26-ի նիստում բողոքի քննարկումը հետաձգվել էր լրացուցիչ տեղեկատվություն ստանալու ակնկալիքով:

Բողոքարկողի կողմից 2011 թվականի փետրվարի 10-ին ստացվել է լրացուցիչ տեղեկատվություն «GIGABYTE» ապրանքային նշանի վերաբերյալ:

ՈՒսումնասիրելով լրացուցիչ ներկայացված նյութերը և հիմք ընդունելով այն փաստը, որ Gigabyte բառը, որպես չափման միավոր համակարգչային տեխնիկայում սարքերի և սարքավորումների վրա օգտագործվում է կրճատ ձևով GB և այն էլ միայն թվի հետ միասին և ապրանքային նշանի գրանցումը չի կարող խոչնդոտ հանդիսանալ հետագայում սարքերի և սարքավորումների վրա GB հապավման օգտագործմանը, կոլեգիայի կողմից առաջարկություն ներկայացվեց ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

Բավարարել «ԳիգաԲայթ Թեքնոլոջի Քո.» ընկերության բողոքը և գրանցել «GIGABYTE» (Հայտի համարը՝ 20091579) բառային ապրանքային նշանը:

Բողոքարկման խորհրդի

նախագահ Ա. Ազիզյան